



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ՓԵՏՐՈՒԱՐ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 46

ԱՄԵՆԱԿԱԼ ԱՍՏՈՒԱԾԸ ՄԵԶԻ ՀԵՏ Է

Աստուած է մեր ապաւենն ու պօրութիւնը,
նեղութեանց մէջ շուրջով հասնող օգնականը:
Հերելաբար մենք չենք վախնար, նոյնիսկ եթէ աշխարհը սարսի,
եւ լեռները իյնան ծովերուն խորը:
Նոյնիսկ եթէ ալիքները շառաչեն ու փրփրին,
եւ լեռները դողան անոնց կապաղութենէն:
Ամենակալ Տէրը մեզի հետ է. մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է:
Եկէք, փեսէք Տիրոջ գործերը,
վարմանահրաշ գործերը՝ որ ան կ'ընէ երկրի վրայ:
Աշխարհի չորս անկիւններուն՝ պարերազմները կը դադրեցնէ,
աղեղները կը կոտրէ, նիպակները կը փշրէ,
եւ վահանները կրակով կ'այրէ:
«Դադրեցուցէք ձեր կռիւները, եւ ճանչցէք թէ ես եմ Աստուածը,
ես է որ կ'իշխեմ ազգերուն, ես կը տիրեմ աշխարհին»:
Ամենակալ Տէրը մեզի հետ է.
մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺՈՐ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

23 - 24 ԳԼՈՒԽ

ԵՐԵՄԻԱՅԻՆ ՊԱՏՊԱՐԵՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ (23:21-32)

Ահա մարգարեներն ու քահանաները Ասորիոյ աշքին խոտորեցան ու մոլորեցուցին ժողովուրդը, Ասորիոյ անունով սուր մարգարեութիւն ընելով: Անոր համար ալ Տէրը կը զգուշացնէ զիրենք, ըսելով. «**Ձեզի մարգարեութիւն ընողներուն խօսքերուն մարիկ մի ընէք, անոնք ունայնութեան կը փանին ձեզ, իրենց սրտին փեսիլքը կը խօսին, ոչ թէ Տիրոջ բերնէն**» (16 հմբ): Ահա Տէրը յապակօրէն կ'ըսէ. «**Այս մարգարեները ես չորկեցի, ես անոնց չխօսեցայ**» (21 հմբ), այլապէս եթէ Տիրոջ խօսքերը ըլլային, ապա ժողովուրդը պէտք էր ազդարարէին որպէսզի իրենց սխալ ու չար ճամբէն եր վերադառնային: Ընդհակառակը անոնք առաւել եւս կը քաջալերեն այդ ձեւը (22 հմբ):

Այնպէս կը ներկայացնեն իրենց արարքը, որպէս թէ Տէրը չի փեսներ թէ իրենք ինչ կ'ընեն: Ասորիոյ անունը կ'օգտագործեն, սուր մարգարեութիւն ընելու: Որպէս թէ երազներ կը փեսեն, անով ժողովուրդը մոլորեցնելու եւ ճշմարիտ աստուածաշարութենէն զիրենք հեռացնելու, ինչպէս իրենց նախահայրերը ըրին Բահադի պարճառով (25-27 հմբ):

Ով որ իրաւ երազ կը փեսնէ, թող որ ըսէ երազ է, եւ ով որ կը մարգարեայ, թող ըսէ, այլապէս, յարդը եւ ցորենը նոյնը չեն, անոր համար ալ Ասորիոյ խօսքը կրակ է, որ կ'ուրէ յարդը, եւ նման այն մութին որ ապառաժը կը կոտորէ (28-29 հմբ), այնպէս պիտի ըլլայ նաեւ Ասորիոյ դարաստանը այդպիսիներուն նկարմամբ:

Որպէզի կարենան ժողովուրդը մոլորեցնել այսպէս կ'ըսեն, «**Տէրը այսպէս ըսաւ**» (31 հմբ), բայց Տէրը կը զգուշացնէ որ ես զանոնք չորկեցի ու անոնց չպարտիրեցի (32 հմբ):

ՎԱՏՈՒԾՈՅ ԲԵՈՒՐ (23:33-40)

Այս է փարբերութիւնը Ասորիոյ ճշմարիտ պարզամին եւ սուր մարգարէին պարզամին: Ասորիոյ պարզամը որպէս բեռ է, ծանրութիւն է լսողին համար, մինչ սուր մարգարէին պարզամը թեթեւ ու հաճելի է, «խաղաղութիւն, խաղաղութիւն» խոստանալով: Փոխանակ բեռ է ըսելու, ընդհակառակը, «Տէրը ինչ խօսեցաւ, ինչ պարասխան փուսաւ» (35 հմբ): Ընդհակառակը, Ասորիոյ խօսքը բեռ չէ, այլ հրաւեր կոչ է մեղաւորին, որպէսզի ապաշխարութեամբ վերադառնայ իր սխալ ու չար ճամբէն եւ Ասորիոյ ալ փրկէ զինք: Բայց որովհետեւ պիտի շարունակեն ըսել, Ասորիոյ բեռը, Ասորիոյ ալ զիրենք պիտի մոռնայ ու երեսէ պիտի ձգէ, ու յաւիտենական նախապիտի ու անարգանք պիտի դնէ անոնց վրայ (39-40 հմբ):

ԵՐԿՈՒՄ ԿՈՂՈՎ ԹՈՒՉ (24:1-10)

Այնպէս ինչպէս բրուսին օրինակով Տէրը Իր պարզամը փուսաւ Երեմիային, այնպէս ալ երկու կողով թուգերու օրինակով դարձեալ Իր պարզամը կու փայ անով ցոյց փալու Իր փրկութեան խոստումը եւ պարիժը:

Ներաբրբրական է, որ թուգը, այնպէս ինչպէս միւս պարուղներու պարագային, իբրեւ առաջին պարուղ, երախայրիք, Ասորիոյ ընծայուելու էր. «**Երկրիդ առաջին երախայրիները քու Տէր Ասորիոյդ փունը պէտք է փանխա**» (Ելից 23:19): Պարուղը, որպէս խորհրդանիշ նաեւ ժողովուրդին, որովհետեւ Իսրայէլն ալ Ասորիոյ համար իբրեւ առաջին ժողովուրդ, պէտք էր ամբողջութեամբ Ասորիոյ ընծայուէր, Անոր փրամորթեան փակ ըլլալու, Անոր կամքին համաձայն ապրելու: Բայց ահա երկու կողով թուգերու օրինակով ցոյց կը փրուի, որ մէկ կողովը աղէկ թուգերով լեցուն, իսկ միւս կողովը՝ գէշ թուգերով, Տիրոջ փաճարին առջեւ դրուած:

Ահա հակառակ գերութեան, Տէրը կը խոստանայ, փրկութիւն: Աղէկ թուգերը, անոնք են, որոնք գերութեան փարուեցան Բաբելոն, որոնք այդ կացութեան մէջ առիթը ունեցան իրենց անձերը խոնարհեցնելու, առիթ ապաշխարութեան, զԱսորիոյ փնտրելու: Իսկ անոնք որոնք Երուսաղէմի մէջ մնացին, եւ գերութեան չարութեան, նախ այնպէս կարծեցին, որ իրենք աւելի հաճելի են Ասորիոյ աշքին, խորքին մէջ, սակայն, այդպէս չէր, ընդհակառակ անոնց պարագային Տէրը զիրենք կը ներկայացնէ որպէս գէշ թուգեր, որովհետեւ անոնք մնացին իրենց մեղքին մէջ: Իսկ անոնք որոնք գերի փարուեցան, անոնք առիթ ունեցան անդրադարձի, Ասորիոյ վերադառնալու: Լաւագոյն օրինակը Դանիէլ եւ իր երեք ընկերները, որոնք մերժեցին թագաւորին առաջարկը, եւ մնացին հաւաքարիմ Ասորիոյ: Ահա

Աստուծոյ խոստումը. «Իմ աչքերս անոնց վրայ պիտի հասարարեն բարութեան համար, ու զանոնք այս երկիրը պիտի դարձնեն եւ զանոնք պիտի շինեն ու պիտի չփլցնեն: Չանոնք պիտի րնկեն ու պիտի չխլեն: Անոնց այնպիսի սիրտ մը պիտի փամ, որ զիս ճանչնան թէ ես եմ Տէրը: Անոնք իմ ժողովորդս պիտի ըլլան ու ես անոնց Աստուածը պիտի ըլլամ, որովհետեւ իրենց բոլոր սրտովը ինծի պիտի դառնան» (6-7 հմր): Առաջին խոստումը. Աստուծոյ աչքը մնայուն անոնց վրայ, զիրենք պաշտպանելու, երբեք Աստուծոյ աչքէն հեռու պիտի չըլլան: Աստուծոյ աչքը անոնց վրայ բարութեան համար: Գերի պիտի փարուին, կամ արդէն իսկ փարուած են, բայց ահա խոստումը, որ ետ պիտի վերադառնան: Յաջորդ խոստումը Տէրը պիտի շինէ եւ չփլցնէ, րնկէ ու չխլէ: Մանաւանդ՝ անոնց պիտի այնպիսի սիրտ մը փայ, որ զԱստուած ճանչնան որպէս Տէր: Առաջին խոստումին կրկնութիւնը, անոնք ինծի ժողովորդ եւ ես իրենց Աստուածը: Այս բոլորը ինչո՞ւ, «որովհետեւ իրենց բոլոր սրտովը պիտի դառնան» (7 հմր): Այո, Տէրը խոստացաւ փրկել, բայց այդ խոստումը իր լրումը, կատարումը կը գտնէ անոնց, որոնք իրենց բոլոր սրտով պիտի վերադառնան Աստուծոյ: Այդ խոստումին կատարումը մեքենական չէ: Ահա նեղութեան մէջ զԱստուած փնտրելու եւ ամբողջութեամբ Իրեն վերադառնալու: Անգամ մը եւս զԱստուած ունենալու իրենց կեանքի կեդրոնը, ապրելու Անոր կամքին համաձայն: Հերելելու ու գործադրելու Անոր պատուիրանները: Ուստի միայն զԱստուած ճանչնալը բաւարար պիտի չըլլայ եթէ Աստուծոյ վերադառնալ չկայ ամբողջական սրտով:

Իսկ անոնք որոնք գէշ թուգերն են, այսինքն՝ ուրբեր որոնք Երուսաղէմի մնացորդը, նաեւ Եգիպտոսի մէջ բնակողները, Աստուծոյ դատաստանը: Նեղութիւն, թշուառութիւն, նախապիներ, ծաղրանք, անարգանք ու անէծք, սուր սով ու ժանտախտ: Այն դատաստանին նման որ Եգիպտոսի գլխուն եկաւ: Ինչպիսի յաջողութիւններ ալ ունենան, սակայն, Աստուծոյ անէծքը անոնց հետ մինչեւ վերջ, որ պիտի չկարենան վայելել: Ասոնք անոնք են, որոնք չարութեան մէջ ինկան եւ երբեք չուզեցին վերադառնալ Աստուծոյ: